



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
08 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Վաղարշակ Ամիրխանյանը, Անահիտ Առաքելյանը, Վարդան Ասատրյանը, Աննման Բաբայանը, Վարդուհի Բարսեղյանը, Խաչիկ Իսրայելյանը, Արմեն Խաչատրյանը, Անահիտ Հակոբյանը, Քրիստինե Մանուկյանը, Արթուր Մուրադյանը, Գևորգ Մուրադյանը, Նորայր Սարգսյանը, Սոֆիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Տիգրանյանը, բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Գաբրիելյանը, Արտակ Թովմասյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, համայնքի ղեկավարի օգնական Թելուշ Հովհաննիսյան, Սիրանուշ Նիկողոսյան, Գայանե Արմենակյան, Բաբկեն Բեգլարյան, Վարազդատ Վարդանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Հարությունյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի 2022 թվականի օգոստոսի 8-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը քննարկելու մասին:

2) Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 7 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

4) Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

5) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

6) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

7) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

8) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

9) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

12) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

13) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

14) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

15) <<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, կանոնադրության փոփոխությունը, աղբահեռացման գրաֆիկը, սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157-Ա/

2.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզետի 2022 թվականի հուլիսի 11-ի N 01/08.1/03987-2022 գրությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.